

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Ի՞նչ է զարգացման ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:
6. Եզրափակում:

## ԻՆՉ Է ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հնգամյա ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի իրավիճակի գնահատումը համայնքը բուրժավորող և ներկայացվող հատկանիշների ու բաղադրիչների վերլուծությունն է:

Նկատի ունենալով համայնքի ստեղծման, զարգացման սոցիալ-տնտեսական և մի շարք այլ առանձնահատկություններ, Ազատան համայնքի գնահատման ցուցանիշները, կարելի է դասակարգել ըստ հետևյալ բաղադրիչների՝

- Պատմական տեղեկությունների համայնքի մասին,
- Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները,
- Ժողովրդագրություն,
- Համայնքի տնտեսության սոցիալական վերլուծությունը,
- Տեղական ինքնակառավարման համակարգի վերլուծություն,
- Քաղաքաշինություն:

Այս թվարկումից առանձնացնում ենք համայնքի տնտեսության վերլուծության բաժինը, որն իր հերթին կարելի է բաղադրել առանձին ենթաբաժինների՝

- Գյուղատնտեսության արտադրության գնահատական,
- Համայնքի արդյունաբերական պոտենցիալ,
- Առողջապահական, մշակութային և սպորտի համակարգի վերլուծություն,
- Համայնքի հիմնական միջոցները և դրանց փաստացի ֆիզիկական վիճակի վերլուծություն:

Ներկայացվում է Ազատան համայնքի իրավիճակի գնահատումը ըստ թվարկված դասակարգման բաղադրիչների:

## Պատմական տեղեկություններ համայնքի մասին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան գյուղը հիմնադրվել է VI-V- րդ դարերում: Գյուղի ազգաբնակչությունը հիմնականում տեղաբնակներ են: 1828-1929 թթ ռուս-թուրքական պատերազմներից հետո մեծ թվով հայեր Գաբաղանից, Վահկանից, ինչպես նաև Մուշից ու Ալաշկերտից գաղթել և բնակություն են հաստատել Ազատան գյուղում: 1950-ական թվականների ընթացքում Ազատան գյուղում բնակվում են նաև ազգությամբ եզդի շուրջ 25 ընտանիքներ, որոնց թիվը առ.1-ը դեկտեմբերի 2011 թ-ի դրությամբ կազմում է 283 մարդ:

Ազատան գյուղը մի ժամանակ կոչվել է Գադմա, որը նշանակում է դեմ գալ, ընդառաջ գալ: IX-րդ դարի առաջին տասնամյակից սկսած գյուղը կոչվել է նաև Խլի Ղարաքիլիսա, Փոքր Ղարաքիլիսա, 1945թ-ի հունվար ամսից անվանակոչվել է Ազատան: Սկզբնական շրջանում գյուղում ապրել են 600-700 մարդ, այնուհետև 1831թ-ին գյուղը դասվել է Արևելյան Հայաստանի 1000-ից ավելի բնակչություն ունեցող բնակավայրերի շարքում: Ղևոնդ Ալիշանը իր «Շիրակ» աշխատության մեջ նշում է, որ Փոքր կամ Խլի Ղարաքիլիսան ունեցել է ավելի քան 250 տնտեսություն:

Խլի Ղարաքիլիսա անունը ծագել է հետևյալ իրադարձությունների արդյունքում՝ V-VIրդ դարերում գյուղում կառուցված եկեղեցու զանգը այնքան մեծ է եղել, որ հնչեցնելիս ղողանջները հասել են մինչև Կարս ու Անի: Երբ Նադիր շահը հայտնվում է Շիրակի կողմերում, հրամայում է զանգն իջեցնել և տեղափոխել Իրան: Ճանապարհին զանգը սայլի վրայից գլորվելով ընկնում է Կարկաչուն գետի ճահճուտը: Գյուղի բնակիչները, քահանայի հրահանգով, գիշերվա մեջ զանգի լեզվակը հանելով պահում են մատուռում, որը պահպանվում է մինչև օրս: Դրանից հետո ճահճուտի կողքով անցնող անցորդները մի-մի հատ քար են գսել զանգի մեջ՝ լսելու խուլ ձայնը, պատճառ հանդիսանալով զանգի ծանրացման և ընկղման համար: Այդ դեպքից հետո Ղարաքիլիսա գյուղի անվան վրա ավելացել է խուլ բառը, դառնալով Խլի Ղարաքիլիսա:

Գյուղը մի քանի անգամ ենթարկվել է թուրքերի և պարսիկների ասպատակություններին, սակայն ազատանցիների ամուր կամքի ու աշխատասիրության շնորհիվ գյուղը զարգացել, վեր է հառնել ու մեր օրերում դարձել մեր երկրի լավագույն համայնքներից մեկը:

Համայնքում կա երկու եկեղեցիներ՝ Հայ Առաքելական և Կաթողիկե, որոնք Խորհրդային պետության փլուզումից հետո վերանորոգվել և դարձել են գործող եկեղեցիներ:

Մինչև 1992 թվականը գյուղում գործել է կոլեկտիվ տնտեսության ձևը, իսկ 1992թ-ից հետո՝ գործում է տնտեսավարման սեփականության ձևը: Այժմ համայնքում բնակվում են շուրջ 5500 մարդ, համայնքում գործում է հանրակրթական դպրոց, արվեստի դպրոց, մարզադպրոց, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, ինչպես նաև «Ազատան համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

## **Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները**

Ազատան համայնքը գտնվում է Գյումրի քաղաքից հարավ-արևմուտք՝ 5 կմ հեռավորության վրա, Երևան քաղաքից՝ 110կմ հեռավորությամբ: Ծովի մակարդակից ունի 1510 մ բարձրություն: Համայնքը աշխարհագրական դիրքով նախալեռնային է, սահմանակից է Գյումրի, Ախուրյան, Արևիկ, Այգաբաց, Բենիամին, Բայանդուր, Երազգավորս, Գետք և Ղարիբջանյան համայնքներին: Համայնքի տարածքով է անցնում Գյումրի-Երևան հանրապետական նշանակության մայրուղին:

Համայնքի հողերի մեծ մասը սևահողեր են և ունեն գյուղատնտեսական նշանակություն, իսկ արոտավայրերը քիչ են ու աղքատիկ:

Կլիման՝ Հայաստանի հարավային շրջանների հետ համեմատած, ցուրտ է տեղումների քանակն ու օդի հարաբերական խոնավությունը գտնվում են միջին մակարդակի վրա: Աճում են հիմնականում բանջարաբուստանային և հացահատիկային կուլտուրաներ, ինչպես նաև ցրտադիմացկուն մրգատու ծառեր:

Համայնքը գտնվում է սեյսմիկ գոտում, 1988թ-ի ավերիչ երկրաշարժից բնակելի տներ չքանդվեցին, սակայն III-րդ և IV-րդ աստիճանի վթարային դարձան 3 տներ, քանդվեցին պահեստներ, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու զանգակատունը:

## **Ժողովրդագրություն**

Առ 01-ը հունվարի 2016թ դրությամբ համայնքում հաշվառված են 5828 բնակիչ, որից արական սեռի՝ 3046, իգական սեռի՝ 2782, փաստացի բնկվում են 5509 մարդ:

Ստորև ներկայացվում է Ազատան համայնքի ժողովրդագրության բնութագիրը՝ ըստ կարևոր ցուցանիշների.

• Նախադպրոցական /0-6տ./	579
• Դպրոցական /7-17տ./	892
• 18-60տ.	4137
• Ընտանիքների թիվը	1295
• Ժամանակավոր բացակայողներ տնտ.	210
• Ժամանակավոր բնակիչներ	415
• Թոշակառուներ	601
• Հայրեն. Պատերազմի մասնակիցներ	1
• Ազատամարտիկներ	22
• Ջոհված ազատամարտիկներ	4
• Բռնագաղթվածներ	0
• Գործազուրկներ	100
• Փարոս համակ. հաշվառված ընտանիք	800
• Նպաստառու ընտանիքներ	115
• Աշխատունակ բնակչության թիվը	2900
• Ընտրողների թիվը	3813
• Միայնակ ծերեր	10
• Խիստ կարիքավոր ընտանիքներ	40

Ժողովրդագրության ընդհանուր վերլուծության տեսանկյունից կարևոր է նաև նրա շարժի /փոփոխության/ գնահատականը՝ կախված տարբեր ցուցանիշներից: Այդ փոփոխությունը ներկայացվում է հետևյալ աղյուսակի միջոցով:

N	Տարի			% ընդ. բնակչության նկատմամբ
	Ցուցանիշ	2015	2016	
1	Ծնունդ	75	72	1.3
2	Մահ	47	45	0.7
3	Արտագաղթ	20	43	0.7
4	Ներգաղթ			
5	Բնակչության թիվը տարեսկզբին	5820	5828	
6	Բնակչության թիվը տարեվերջին	5828	5812	
7	Բացարձակ փոփոխություն	+8	-16	

### Համայնքի տնտեսության վերլուծությունը

Կատարենք համայնքի տնտեսության վերլուծությունը՝ ըստ տնտեսության առանձին բնագավառների:

## Գյուղատնտեսության գնահատականը

Համայնքում գյուղատնտեսությունը վարվում է նախալեռնային ագրոտեխնիկական պայմաններին բնորոշ ձևերով՝ հողագործության և անասնապահության տեսքով:

Հողագործությունն իրականացվում է անհատական գյուղացիական տնտեսությունների միջոցով, տնամերձ, սեփականաշնորհված և վարձակալված, գյուղատնտեսության վարման տեսանկյունից նպաստավոր հողատեսքերի վրա:

Գյուղացիական տնտեսությունների թիվը	1277
Համայնքի ընդհանուր վարչական տարածքը	3857 հա
Այդ թվում վարելահող	2492 հա
Որից՝	
Սեփականաշնորհված վարելահող	2303.5 հա
Համայնքային սեփականության հող	1389.3 հա
Պետական սեփականության հողեր	155 հա
Տնամերձ հողամասեր	329 հա
Համայնքային սեփականության արոտներ	624 հա
Այլ հողեր	111.2 հա
Բնակավայրի տարածքի հասարակական կառուցապատման տակ	8.1 հա
Ընդհանուր օգտագործման հողեր	42 հա
Այլ հողեր	43 հա
Արդյունաբերական և ընդերքի հողեր	54 հա
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի հողեր	71 հա
Պատմամշակութային հողեր	14.9 հա
Հատուկ նշանակության հողեր	21 հա
Անտառային հողեր	4.8 հա
Ջրային հողեր	42 հա

Համայնքում սեփականաշնորհված մեկ հողաբաժինը, ներառյալ տնամերձը՝ 0.96 հա է: Համայնքին բնորոշ մշակվող գյուղատնտեսական կուլտուրաներն են կարտոֆիլը, կաղամբը, բազմամյա խոտը, հացահատիկային կուլտուրաները:

Ստորև աղյուսակի տեսքով, ներկայացվում է համայնքի գյուղատնտեսական արտադրության /հողագործության/ վարման հիմնական բնութագրերը՝ ըստ կարևորության ցուցանիշերի:



	Կուլտուրաներ	Կարտոֆիլ	Կաղամբ	Հացահատիկային կուլտ.	Խոտ բազմամյա	Այլ
	Ցուցանիշներ					
1.	Կուլտ. մշակման համար զբաղեցված տարածքները հեկտարով	1300	10	750	250	98
2	Միջին բերքատվություն ցենտներով	200	500	25	45	
3	Արտադրական ծավալները, ցենտներով	260000	5000	18750	11250	
4	Համայնքի եկամուտները մլն դրամ	1300	25.0	562.5	67500	

Գյուղատնտեսության արտադրության կազմակերպման մյուս ձևը անասնապահությունն է, որը վարվում է անհատական գյուղացիական տնտեսությունների կողմից: Համայնքում անասնապահությամբ են զբաղվում 1277 գյուղացիական տնտեսությունների մոտ 40%-ը:

Անասնապահության բնագավառի բնութագիրը, ըստ ճյուղին բնորոշ կարևորագույն ցուցանիշների, ներկայացվում է հետևյալ աղյուսակում:

	Անասնազույգ	Խոշոր եղջ. անասուն	Կովեր	Խոզեր	Ոչխար	Թռչուն	Համախարտադրանք	Համայնքի եկամուտ մլն դրամ
	Ցուցանիշ							
4	Թվաքանակը 01.01.2016թ դրությամբ	2255	1102	83	11	4614	--	--
1.	Մսի արտադրություն տոննա	25	6	4.3	0.2	1.5	57	74.1
2	Կաթի արտադրություն մլն լիտր	--	2.222	--	--	--	2,222	222,200
3	Չվի արտադրություն հազար հատ	--	--	--	--	850	711,180	28,447,2

Գյուղատնտեսական մթերքների իրացումը կատարվում է հանրապետության քաղաքների շուկաներում:

Համայնքի արդյունաբերական պոտենցիալը

Ազատան համայնքը զարգացած արդյունաբերական պոտենցիալ ունեցող համայնքների շարքին դասել չի կարելի, որովհետև մինչև 1992թ-ը համայնքում գործել են Գյումրու Գավառնոմոտր գործարանի և Տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաձյուղերը, ինչպես նաև գուլպա-նասկեղենի փոքր արտադրամասեր, որոնք այժմ չեն գործում: Համայնքում առկա է և գործում է կաթնամթերքի արտադրության «ԻԳԻԹ» ՍՊԸ արդյունաբերական ձեռնարկությունը:

Կրթություն

1988թ-ի ավերիչ երկրաշարժի հետևանքով օգտագործման համար ոչ պիտանի դարձավ համայնքի միակ միջնակարգ դպրոցի շենքը, որի պատճառով մինչև 1997 թվականը դպրոցի դասերը անցկացվեցին ժամանակավոր կառույցներում: Դպրոցի երկհարկանի մասնաշենքը 1996թ-ին վերանորոգվեց Սոցներդրումների հիմնադրամի գրասենյակի միջոցներով, որից հետո համայնքը ունեցավ 190 տեղանոց դպրոցի մասնաշենք:

2002-2003թ-ին համայնքում Պետբյուջեի միջոցներով կառուցվեց դպրոցի երկրորդ մասնաշենքը՝ 350 աշակերտական տեղով, որից հետո համայնքում ձևավորվեց մեկ հերթանի կրթական համակարգ:

Երկրաշարժից հետո համայնքը նախակրթարան չի ունեցել: 2008թ-ին ՀՀ Կառավարության և կրթական համակարգերի ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացված փորձնական ծրագրերի արդյունքում համայնքում բացվեց երկու խմբից բաղկացած նախակրթարան:

	Կազմակերպության անվանումը	Երեխաների թիվը	Խմբերի թիվը	Դաստիարակների թիվը	Աշխատողների թիվը	Շենքի փաստացի վիճակը
1.	Նախակրթարան	60	2	4	4	լավ

Կրթական համակարգի ընդհանրական բնութագիրը՝ ըստ համապատասխան ցուցանիշերի բերվում է հետևյալ աղյուսակում.

	Ցուցանիշեր Դպրոցներ	Աշակ. թիվը	Դաս. թիվը	Մանկ ավ. թիվը	2016թթ ԲՈՒՀ ընդունվ. թիվը	Կից կառույցի առկայությունը	Փաստ. ֆիզ վիճ
1.	Միջնակարգ դպրոց 1-ին մասնաշենք		29	58	22	ոչ	բավարար
2.	Միջնակարգ դպրոց 2-րդ մասնաշենք	753				ոչ	նորակառույց

Առողջության համակարգում գործում է հիվանդանոցը, պոլիկլինիկան, Մոր և Մանկան կենտրոնը,

	Անվանումը	Բուժ	Բժիշկների	Նշումներ
--	-----------	------	-----------	----------

		քույրերի թիվը	թիվը	
1.	Ազատանի բուժամբուլատորիա	8	2	<b>ՌԻՆԻ վերանորոգման և բուժասարքավորումների կարիք</b>

Մշակույթ և սպորտ

Համայնքում մշակույթային գործը կազմակերպվում է մշակույթի տանը և արվեստի դպրոցում: Մշակույթի տունը ունի 600 նստատեղով դահլիճ: Մշակույթի տան շենքում գործում է 8000 կտոր գրականություն ունեցող գրադարանը և պարի ինքնագործ խմբակը:

Համայնքում գործում է համայնքային ենթակայության Ա.Խաչատրյանի անվան արվեստի դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1972 թվականին: Դպրոցն ունի դաշնամուրի, քանոնի, ժողգործիքների, պարարվեստի, ոկլալ և այլ բաժիններ: Դպրոցն ունի հարմարավետ, լոկալ ջեռուցմամբ ապահովված շենք: Շենքի ջեռուցման համակարգը վերանոգվել է 2008 թ-ին համայնքի բյուջի միջոցներով:

Համայնքում գործում է սպորտ դպրոց, որը պատկանում է ՍԵՎԱՆ մարզական ընկերությանը: Դպրոցում իրականացվում են երկու մարզաձևերի ուսուցում՝ ազատ ոճի ըմբշամարտ և բռնցքամարտ:

Համայնքում կա տիպային մարզադաշտ, որտեղ տեղի են ունենում ֆուտբոլային պարապմունքներ:

	Կազմակերպության անվանումը	Երեխաների թիվը /ընթերցողների/	Խմբերի, մարզաձևերի թիվը	Մանկավարժն. թիվը	Աշխատողների թիվը	Շենքի փաստացի ֆիզ. վիճակը
1	«Ա.Խաչատրյանի անվան» արվեստի դպրոց	65	5	14	3	լավ
2	Մշակույթի կենտրոն	300 ընթերցող	---	---	5	լավ
3	Մարզադպրոց	40	2	1	2	վատ
4	Մարզադպրոց	40	2	6	2	ծատ

**ՀԱՍԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՓԱՍՏԱՑԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Գ/Գ	Ցուցանիշ Հիմն. միջոցներ	Զ/Մ	Քանակը	Փաստացի շահագործ	Վիճակը	Պիտանիությանը	Անհրաժ. է վերանորոգ.
1	Գյուղապետարանի շենք	հատ	1	այո	Բավ	-	ըչ
2	Մշակույթի տուն	հատ	1	այո	Լավ	Պիտանի	ըչ
3.							
4	Նախադպրոցական հիմնարկ	հատ	1	ոչ	Վատ		այո
5	Ճանապարհային ցանց	կմ	35	այո	Լավ	Մասամբ	այո
6	Կամուրջներ	հատ	3	այո	Բավարար		այո
7	Մասնագիտ աղբատար ավտոմեքենա	հատ	1	այո	Լավ	Պիտանի	ըչ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացվում է երկու մակարդակներում  
ա/ Համայնքի ղեկավար

բ/ Համայնքի ավագանի


Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, իրավունքների և պարտականությունների կարգը սահմանված է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով:

Ազատանի համայնքապետի՝ 2016թ հոկտեմբերի 2-ին կայացած ընտրություններում առաջադրված երկու թեկնածուներից ընտրվեց Վարդան Իկիլիկյանը, որը ստացավ մասնակցած ընտրողների ձայների 75%-ը:

Համայնքի ղեկավարն իր գործունեությունն իրականացնում է իր տեղակալի, համայնքային ծառայության և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների միջոցով, որոնց բնութագիրը բերվում է ներկայացվող աղյուսակում.

Հ/Հ	Տվյալներ		Ծննդ. թիվը	Կրթություն	Մասնագ.	Զբաղ. պաշտ.	ՏԻՄ աշխ փորձ
	Անուն, Ազգանուն						
1	Վարդան Շահենի Իկիլիկյան		1965	Բարձ.	Գյուղատնտես	համայնքի ղեկավար	24
2	Գագիկ Հմայակի Պողոսյան		1965	Բարձ.	Գյուղատնտես	համայնքի ղեկավարի տեղակալ	23
3	Ղուկաս Ֆուրմանի Մուրազյան		1973	Բարձ.	Ինժ-շինարար	աշխատակազմի քարտուղար՝ Համ.Օւռ.	6
4	Արա Մեխակի Եսայան		1967	Բարձ.	Ինժ.Մեխ	գլխավոր մասնագետ՝ Համ.Օւռ.	7
5	Արիստակես Յուրայի Հունոյան		1981	Բարձ.	Մանկավարժ	գլխավոր մասնագետ՝ Համ.Օւռ.	7
6	Արփինե Մուշեղի Հայկյան		1985	Բարձ.	Իրավաբան	գլխավոր մասնագետ՝ Համ.Օւռ.	2
7	Մուշեղ Սեդրակի Հունոյան		1959	Միջ.մասն.	Ինժ.Տեխ.	առաջատար մասնագետ՝ Համ.Օւռ.,	22
8	Անահիտ Հրաչի Սահրադյան		1963	Միջն.մասն.	հաշվապահ	առաջատար մասնագետ՝ Համ.Օւռ.,	7
9	Աիգա Մեխակի Եսայան		1953	Բարձ.	Գյուղատնտ	առաջին կարգի մասնագետ՝ Համ.Օւռ.	18
10	Գուրգեն Մայիսի Կոխպեցյան		1989	Բարձ.	Տնտեսագետ	առաջին կարգի մասնագետ՝ Համ.Օւռ.	-
12	Սոնա Լևուշի Մոսոյան		1963	Միջ.մասն.	Տեխնոլոգ	համակարգչային օպերատոր,	20
13	Կիմա Գանիկի Կիրակոսյան		1952	Միջ.մասն.	Հաշվապ	գանձապահ	25
14	Յուզբահար Աշոտի Խաչատրյան		1950	Միջ.մասն.	Կապ.տեխն	գործավար,	-
15	Թամարա Միշայի Եթարյան		1962	Միջ.		հավաքարար,	-
17	Մարտին Գարեգինի Մոսոյան		1941	Միջ.մասն.		պահակ,	-
18	Ապետ Հենրիկի Ղազարյան		1958	Միջ.մասն.		վարորդ,	-
19	Սամվել Հակոբի Հակոբյան		1962	Միջ.մասն.		Էլեկտրիկ	-

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ



Ազատան համայնքի ավագանու անդամներն ընտրվել են 2016թ սեպտեմբերի 2-ին կայացած ընտրություններում, որոնք թվով 8 են:

Համայնքի ավագանին գործում է համաձայն ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու կանոնակարգով սահմանված իրավունքների և պարտավորությունների սահմաններում, ի շահ համայնքի բարեկեցության, կայացնում է որոշումներ և նպաստում համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Համայնքի ավագանին գործում է ազատ, նպաստում համայնքի բյուջեի ձևավորման, կատարման ու վերահսկման աշխատանքներին:

Համառոտ տեղեկատվություն Ազատանի համայնքի ավագանու մասին:

h/h	Անուն, Ազգանուն	Ծննդյան թիվ	Կրթական ցենզ	Սեռ	Կուսակցական պատկանելություն	Երբ է ընտրվել
1	ԱՎԵՏԻՍ ԴԱՎԹՅԱՆ	13/08/1983	միջն. հանր.	ար	ՀՀԿ	2016
2	ԱՆԴՐԱՆԻԿ ԻԿԻԼԻԿՅԱՆ	20/01/1973	միջն. մասնագ.	ար	անկուսակցական	2016
3	ԳԵՎՈՐԳ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	28/12/1977	բարձրագույն	ար	անկուսակցական	2016
4	ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ	18/07/1970	բարձրագույն	ար	անկուսակցական	2016
5	ԿԱՐԱՊԵՏ ԵՆԳՈՅԱՆ	09/07/1986	բարձրագույն	ար	անկուսակցական	2016
6	ԱԼԵՔՍԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ	21/11/1978	միջին մասնագիտական	ար	անկուսակցական	2016
7	ՊԱՊ ԵՆԳՈՅԱՆ	07/08/1996	թերի բարձրագույն	ար	անկուսակցական	2016
8	ՀՄԱՅԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ	01/09/1995	թերի բարձրագույն	ար	անկուսակցական	2016

Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակարանային ֆոնդը ընդգրկում է 94780քմ կամ 1005 բնակելի միավոր, որոնցից 99%-ը հանդիսանում է բնակչության սեփականությունը:

Երկրաշարժից հետո ուզբեկական շինարարների կողմից համայնքի հարավային կողմում կառուցվեց 8 քաթեշային բնակարան 720քմ բնակ. մակերեսով:

Բնակարանային շինարարությունը իրականացվում է միայն մասնավոր սկզբունքներով, որը վերջին տասը տարիների ընթացքում ընթանում է դանդաղ տեմպերով:

Համայնքում կան 135 բնակարանի կարիքավոր ընտանիքներ, դեռևս 21 ընտանիքներ բնակվում են ժամանակավոր կացարաններում:

Համայնքի բնակարանային ֆոնդի ցուցանիշները բերված են հետևյալ աղյուսակում.

	Ցուցանիշ	Չափի		Բն.մակերես	Վթարային	Վթարային	Վթարային
--	----------	------	--	------------	----------	----------	----------

h/h	Բնակ.ֆոնդ	միավ	Քանակը		2-րդ	3-րդ	4-րդ
1	<b>Առանձնատներ</b>	հատ	1005	96780	--	2	--
2	<b>Բազմաբնակարան շենքեր</b>	հատ	1	1200	1	--	--

**ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

- Համայնքի աշխարհագրական դիրքը՝ պետական նշանակության ավտոմայրուղու գոյությունը, Գյումրի քաղաքին սահմանակից լինելը
- Մարդկային և աշխատանքային ռեսուրսների առկայությունը
- Առողջապահական համակարգի առկայությունը
- Կրթական բարձր մակարդակը
- Համայնքի տարածքում արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների առկայությունը
- Տրանսպորտի և մեքենա մեխանիզմների առկայությունը
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի համակարգված և թափանցիկ գործունեությունը
- Ձեռնարկատիրական գործունեության առկայությունը
- Գյուղատնտեսության համար պիտանի հողերի առկայությունը
- Համայնքի գազաֆիկացված լինելու հանգամանքը
- Զարգացած կրթական համակարգի առկայությունը
- Համայնքի հեռախոսաֆիկացված լինելը
- Աղբատար ծառայության առկայությունը
- Խմելու ջրի և ոռոգման համակրգը

**ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը
- Բնակչության 5% -ը բնակարանի կարիք ունի
- Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը
- Արտագաղթի առկայությունը
- Կոմունիկացիոն ցանցի բացակայությունը
- Գործազրկության առկայությունը
- Կոյուղու բացակայությունը
- Բնակլիմայական վատ պայմանները /կարկտահարություն,երաշտ, սելաֆներ պտտահողմեր
- Ժամանակավոր կացարանների ֆիզիկական մաշվածության վիճակը
- Ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը և անվճարունակությունը

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի բարենպաստ փոփոխությունների հնարավորությունները համայնքի զարգացման հավանականության գնահատումն է՝ կախված դրանց վրա ազդեցություն ունեցող տարբեր գործոնների փոփոխություններից:

Համայնքի փաստացի ընդհանուր դրական զարգացումների հետ կապված վերլուծենք համայնքի հնարավորությունները.

Համայնքի իրավիճակի բնութագիրը	Բարենպաստ փոփոխությունների հնարավորությունը
Դպրոցի առկայությունը	Դպրոցին կից սպորտ դահլիճի կառուցում
Արվեստի դպրոցի առկայությունը	Առանձին նոր վերանորոգված մասնաշենք տեղափոխում
Նախակրթարանի առկայությունը	Հիմնական գործող մանկապարտեզի բացում
Ժամանակավոր կացարաններում ապրող 21 ընտանիքների առկայությունը	Աջակցել բնակարանային ծրագրերում ընդգրկման հարցերով

Նշենք Ազատան համայնքի բարենպաստ փոփոխություններից մի քանիսը.

- Կապիտալ վերանորոգված մշակույթի տան կահավորում,
- Նախկին մանկապարտեզի մասնաշենքը վերանորոգել և տրամադրել արվեստի դպրոցին,
- 2.6կմ ոռոգման համակարգի վերանորոգում համատեղ ներդրումային ծրագրի միջոցներով:
- Համայնքի կենտրոնական փողոցի կապիտալ վերանորոգման շարունակում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Համայնքին վտանգ սպառնացող փոփոխություններն են.*

1. Տնտեսական բնույթի փոփոխություններ:
2. Տեխնածին աղետներ:
3. Բարոյա-հոգեբանական բնույթի փոփոխություններ:

### Տնտեսական բնույթի փոփոխություններն են.

- ա/ Գյուղ.մթերքների արտադրության տեմպերի նվազումը և ինքնարժեքի բարձրացումը,  
բ/ Գյուղ.մթերքների իրացման դժվարությունները:  
գ/ Արտադրական ձեռնարկությունների հարկադրական պարապուրդը:  
դ/ Գյուղգործիքների և մեխանիզմների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը  
դ/ Բյուջեի թերակատարումը:

### 2.Տեխնածին բնույթի փոփոխություններն իրենց մեջ ներառում են.

- ա/ Երկրաշարժեր  
բ/ հեղեղումներ  
գ/կարկտահարություն  
դ/ուժեղ քամիներ  
ե/ հրդեհներ  
զ/ ցրտահարումներ  
է/երաշտ  
ը/ենթակառույցների գործունեության խափանումներ



**3. Բարոյահոգեբանական բնույթի փոփոխություններն են.**

ա/արտագաղթը

բ/գործազրկությունը

գ/արտակարգ իրավիճակները

դ/ժողովրդագրության բացասական հաշվեկշիռը:

ե/ տարադրամի փոխարժեքների տատանում գյուղ. նթերքների իրացման ժամանակահատվածում:

զ/ վառելանյութի գների կտրուկ աճ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակահատվածում:

**2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Ազատանի համայնքի համար առաջիկա չորս տարիների ռազմավարությունն ու հիմնական նպատակներն են առաջնահերթ խնդիրների նախանշում, դրանց լուծման համար ծրագրված միջոցառումների իրականացում, իրատեսական ձեռնարկումների շնորհիվ և հանրապետական , մարզային, արտասահմանյան կազմակերպությունների աջակցությամբ:

- . Համայնքը դարձնել տարածաշրջանային գյուղատնտեսական զարգացման կենտրոն:
- . Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական ու կենցաղային պայմանները:
- . Լուծել բազմաբնակարան շենքերի կառուցման հարցը:
- . Համայնքում կազմավորել երկրորդ դպրոց, կամ ավագ դպրոց:
- . Կանխել բնակչության արտագաղթը:
- . Կազմակերպել կրթական և մշակութային օջախների գործունեությունը:
- . Կայունացնել համայնքի տնտեսությունը:
- . Ապահովել անօթևան բնակիչներին բնակարաններով:
- . Համայնքը դարձնել բարեկարգ բնակավայր:

**3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՂՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նկարագրություն	Ժամկետը	Անհրաժեշտ միջոցներ /Հազար դրամ/	Աղբյուրը	Աջակցում
1	2	3	4	5	6	
1	Զաջուռչայ գետի հունի իջեցում, հողերի ճահճացման երևույթների կանխարգելում:	Գետի հունի 1,5 կմ բետոնյա կոնստրուկցիաների ապամոնտաժում:	2017-2018թթ	10000-12000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
2	Համայնքի հին մանկապարտեզի շենքը վերանորոգել, տրամադրել արվեստի դպրոցին:	Կապիտալ վերանորոգում:	2017-2019թ	20000-25000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ

3	Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան կոթողում թանգարանի բացում:	Ներքին հարդարում, կահավորում, մեթոդական աջակցում:	2018թթ	5000-8000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
4	Նորակառույց մանկապարտեզին գույքի տրամադրում:	Անհրաժեշտ գույքի և պարագաների ձեռք բերում:	2019թ	2000-4000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
5	Համայնքի 1-ին և 19-րդ փողոցների ասֆալտապատում, մյուսների խճապատում:	1-ին փողոցի ասֆալտապատման շարունակում 1,5 կմ, 19-րդ փողոցի ասֆալտապատում:	2018-2020թթ	80000-100000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
6	Դաշտամիջյան ճանապարհների հարթեցում խճապատումով:	6 կմ դաշտամիջյան ճանապարհների հարթեցում:	2018-2021թթ.	5000-8000	Համայնքի բյուջե	
7	Վերանորոգել Ազատան-Ղարիբջանյան ճանապարհը:	500 մ երկարությամբ ճանապարհի հարթեցում, խճապատում:	2019թ.	800-1000	Համայնքի բյուջե	
8	Երկրորդական փողոցների գիշերային լուսավորության անցկացում:	Թիվ 17, 19, 24, 31, 33 փողոցներում գիշերային լուսավորման համակարգի կառուցում:	2019-2020թթ	5000-6000	Համայնքի բյուջե	
9	Մշակույթի տան դահլիճային աթոռների ձեռք բերում:	400-450 աթոռների ձեռք բերում:	2019-2020թթ	12000-15000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
10	Ռոտոման ցանցի վերանորոգում:	Ստորգետնյա խողովակների և կիսախողովակների փոխարինում:	2018-2021թթ	50000-60000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
11	Մեկ կանգառի ավելացում	1-ին և 34-րդ փողոցների խաչմերուկում ավելացնել կանգառի մեկ տաղավար:	2019թ	450	Համայնքի բյուջե	
12	Վերանորոգել հին գերեզմանատան ցանկապատը	Ցանկապատի ապամոնտաժում և նոր դիրքում կառուցում:	2020-2021թթ	300-400	Համայնքի բյուջե	
13	Նոր գերեզմանատան բացում, պարսպապատում, պլանավորում:	Հողհատկացում, նախագծի պատվիրում, կառուցում:	2019-2021թթ	15000-20000	Համայնքի բյուջե	

14	Գյուղապետարանի վարչական շենքի վերանորոգում:	Պատուհանների փոխարինում նորով, ներքին հարդարում:	2020-2021թթ	3000-4000	Համայնքի բյուջե	
15	Գյուղապետարանի հին շենքը վերանորոգել, դարձնել երիտասարդության ժամանցի վայր:	Շինությունը վերափոխել մեկ հարկանու և կապիտալ վերանորոգել:	2019-2021թթ.	3000-3500	Համայնքի բյուջե	
16	Համայնքի կենտրոնում գտնվող 0,07 հա տարածքում կառուցել պուրակ, կատարել ծառատունկ:	Տարածքի ցանկապատում, բարեկարգում, նստարանների տեղադրում, լուսավորության անցկացում և կանաչապատում:	2018-2020թթ	3000-4000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
17	Մանկապարտեզի նախկին շենքը նվիրաբերել բնակավոդներին:	Օրենքով սահմանված կարգով կատարել նվիրատվություն:	2019-2021թթ	200	Համայնքի բյուջե	
18	Ավարտել Ազատանի մարզադպրոցի հանդերձարանի կառուցումը, մարզադաշտը հարթեցնել:	Հանդերձարանի կառուցումը հասցնել ավարտին, մարզադաշտը հարթեցնել:	2018-2020թթ	2000-2500	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
19	Բարելավել համայնքի սանիտարական վիճակը, ամրապնդել աղբատար ծառայությունը:	Կազմակերպել շաբաթօրյակներ, վերանորոգել աղբատար մեքենան և աղբարկղերը:	2019-2021թթ	3500-4500	Համայնքի բյուջե	
20	Դրամական օգնություններ տրամադրել համայնքի անապահով ընտանիքներին և ուսանողներին, շարունակել նորածին երեխաների ծնողներին դրամական աջակցությունը:	Յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեից տրամադրել միջոցներ:	2017-2021թթ	6000-7000	Համայնքի բյուջե	
21	Հիշատակի և տոն օրերին համայնքում կազմակերպել մարզամշակութային միջոցառումներ:	Յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեից տրամադրել միջոցներ, կազմակերպել միջոցառումներ:	2017-2021թթ	500-1000	Համայնքի բյուջե	
22	Ազատանի միջնակարգ դպրոցի հարևանությամբ կառուցել մարզադահլիճ:	300-350ք.մ մակերեսով մարզադահլիճի կառուցում:	2017-2021թթ	10000-15000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
23	Հակակարկտային կայանների համակարգի ընդլայնում:	Համայնքի հարավ-արևմտյան հատվածում տեղադրել մեկ հակակարկտային	2019-2021թթ	12000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ

		կայան:				
24	Համայնքապատկան հողատարածքում հիմնել մրգատու այգի:	Համայնքապատկան հողատարածքում տնկել մրգատու 1000 ծառ:	2018-2021թ	8000-10000	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ
25	Ստեղծել համայնքային հիմնադրամ:	Ներգրավել բարեգործական նվիրատվություններ հիմնադրամին և ավագանու օգնությամբ նպաստել համայնքի զարգացմանը:	2020-2021թթ	100	Համայնքի բյուջե	Այլ ներդրողներ

#### 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Շիրակի մարզի Ազատանի համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

Զ/հ	Եկամտի տեսակը	2015	2016	2017	2018	2019	2020	2021
		փաստ	փաստ	փաստ	նախ	կանխ	կանխ	կանխ
<b>Ա</b>	<b>Հարկային եկամուտներ ու տուրքեր</b>	33421.0	30686.0	35827.1	37608.0			
1	Հողի հարկ	24596.7	22293.9	20633.5	21202.6			
2	Գույքահարկ	6025.1	5541.8	8914.5	10403.4			
3	Տեղական վճարներ	51.0	9.0	3023.0	3520.0			
4	Տեղական տուրք	2748.2	2841.3	3256.1	2482.0			
<b>Բ</b>	<b>Ոչ հարկային եկամուտներ</b>	42266.5	18958.6	20688.4	14257.2			
5	Պահուստային հողերի վարձավճ.	10854.6	12163.7	9614.1	9500.0			
6	Գույքի վարձակալության վճար	101.9	643.8	425.7	997.2			
7	Այլ ոչ հարկային եկամուտներ	31310.6	6151.1	10648.7	3760.0			
<b>Գ</b>	<b>Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա</b>	49145.4	50503.7	57444.0	58407.3			
<b>Դ</b>	<b>Տարեսկզբի ազատ մնացորդ</b>	48874.8	70494.4	23193.7	24356.0			

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021թթ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Հ/հ	Ցուցանիշները	Չափի միավոր	2015 փաստ	2016 փաստ	2017 փաստ	2018 նախ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Համայնքի տարածքը	հա	3857	3857	3857	3857	3857	3857	3857
2	Բնակչության թիվը	մարդ	5755	5857	5936				
3	Ծնունդ	մարդ	68	61	71				
4	Մահ	մարդ	34	24	44				
5	Աշխ ուեսուրսներ, այդ թվում	մարդ	2896	2912	2500				
	զբաղվածներն ըստ տնտ ճյուղերի	մարդ	2696	2712	2500				
6	Գործազրկության մակարդակը	%	10	12	12				
7	Առևտրի և հաս. սնունդի օբյեկ թիվը	հատ	24	23	26				
8	Պահուստ հողեր	հա	533.1	533.1	533.1	533.1			
9	Պահուստային հողերի օգտ մակարդակը	%	94	95	94				
10	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	25.6	25.6	25.6	25.6			
11	Ոռոգման ցանցի տակ գտնվող հողատարածքը	հա	2475	2475	2475	2475			
12	Ներհամայնքային փողոցների և ճանապարհ երկարություն	կմ	41	41	41	41			
13	Չբարեկարգված ճանապարհների երկարություն	կմ	35	32	32	30			
14	Մասնավոր բն.ֆոնդ	հազ.քմ	126.775	127.075	126.805	127.300			
15	Բնակարանի կարիք ունեցող ընտանիք թիվը	հատ	115	113	112	100			
16	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	մ <sup>3</sup> /տարի	30.5	30.5	25.0				
17	Ջրի կորուստները ցանցում	%	15	10	1	1			

18	Հանրակրթական դպրոցում սովորողների թիվը	մարդ	753	745	706	720			
19	Գյուղապետարանի և ենթակա կազմ աշխ թիվը	մարդ	41	44	44	44			

## 7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը – 1282  
այդ թվում՝

ա/ գյուղացիական անհատական տնտեսություն -1282

2. Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակները, 1հա-ի միջին  
բերքատվությունը

ա/ կարտոֆիլ	900 հա	270 ցենտներ
բ/ հացահատիկ	1550 հա	28 ցենտներ
գ/ խոտ	250 հա	30 ցենտներ

3. Ցանկատարածություններ, ընդամենը՝

ա/ հացահատիկ	1450 հա
բ/ կարտոֆիլ	900 հա

4. Անասնազլխաքանակ

ա/ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, թռչուններ 6152

որից կովեր 1202 գլուխ

խոզեր 53 գլուխ

ոչխարներ – գլուխ

թռչուններ 4897 թև

5. Գյուղատնտեսական մեքենաներ

ա/ տրակտորներ 140 հատ

բ/ մեքենաներ 108 հատ

գ/ կոմբայներ 10 հատ

## ԵԶՐԱՓՈՒՄ

Շիրակի մարզի Ազատան համայնքի 2017-2021թթ հնգամյա ծրագիրը կազմված է հաշվի առնելով տեղական բյուջեի հնարավորությունները, Պատական բյուջեից հատկացված դոտացիաները ինչպես նաև դոնոր կազմակերպությունների ներդրումները:

Ծրագրի իրականացումը անխզելիորեն կապված է պետական աջակցության հետ, որի համար կան որոշակի ակնկալիքներ:

Նախատեսվում է ակտիվ համագործակցություն տեղական և արտասահմանյան հիմնադրամների, ներդրումային ծրագրեր կատարող դոնոր կազմակերպությունների և շահագրգիռ իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ:

Ազատանի համայնքապետարանը որդեգրել է թափանցիկ, նպատակաուղղված, անընդհատ ու հետևողական գործելաոճ, ինչը կնպաստի տարիների ընթացքում համայնքում ձևավորված հիասթափության մթնոլորտի վերացմանը, կուտակված պարտքերի մարմանն ու տարեկան եկամուտների ամբողջական հավաքագրմանը, ինչպես նաև համայնքապետարան-բնակիչ կապի սերտացմանն ու վստահության ձևավորմանը: